ՀՈՒՇԱԳԻՐ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՆ «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կենտրոն) ի դեմս տնօրեն Քնարիկ Ահարոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա եւ «ՇՏԸ» (Շիրակ տեխնոլոգիական ընկերություն) ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրեն Ավետք Եսայանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կողմեր) հաշվի առնելով.

- բարձր եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների համար նոր բարձրակարգ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը Գյումրի քաղաքում եւ հյուսիսային տարածաշրջանում,
- Գյումրիում գոյություն ունեցող ավանդական տեխնիկական եւ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների մասնագիտական ընդգծված մրցունակությունը, ինչպես նաեւ ՏՏ ոլորտում մտավոր ներուժի որոշակի պոտենցիալի առկայության կարեւորագույն գործոնը,
- մատաղ սերնդին պատանեկան հասակից ժամանակակից տեխնոլոգիաներին ավելի մոտ բերելու առաքելությունը եւ մասնագիտական կողմնորոշումը ՏՏ արդյունաբերության մրցունակ հատվածի մեջ ներգրավելու միտումները,
- մայրաքաղաքից դուրս բարձր տեխնոլոգիաների ապակենտրոնացման գործընթացներ ստանձնելու եւ նախադրյալներ ստեղծելու նկրտումները,
- հյուսիսային տարածաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գոյություն ունեցող կրթական մակարդակի շեմի բարձրացման գերնպատակը,
- երիտասարդների եւ բուհ ընդունվողների ավելի պատրաստված սերունդ զարգացնելու ծրագրերը,
- միջնակարգ մասնագիտական կրթօջախներ ստեղծելու հիմքեր եւ նախադրյալներ ձեւավորելու սաղմնային քայլերը (համակարգչային ճարտարագիտության, էլեկտրոնիկայի, ծրագրավորման, ռադիոտեխնիկայի եւ այլ հարակից ասպարեզներում).
- տեխնիկապես պատրաստված երիտասարդների կրիտիկական զանգված պատրաստելու առաքելությանը՝ ավագ դպրոցներում պրակտիկ փորձառություն ձեռք բերելու բացը լրացնելու ձգտմանը,
- Գյումրի քաղաքում պատանիների համար բարձրակարգ մասնագիտական-տեխնոլոգիական խմբակների ենթակառուցվածքներ ստեղծելու ծրագրերը (էլեկտրոնիկայի, վեբ ծրագրավորման, հեռահաղորդակցության եւ այլ մասնագիտական ուղղություններում),

կնքեցին հուշագիրը հետեւյալի մասին.

1. Սույն հուշագրով նախատեսված խնդիրների իրականացման նպատակով Կողմերը համաձայնվում են.

1.1 Գյումրի քաղաքում ստեղծել ռադիոէլեկտրոնիկայի եւ վեբ ծրագրավորման ուսումնական խմբակ Կենտրոնի կազմակերպահրավական կառույցի հովանու ներքո:

1.2 Ներդնել «Շիրակ տեխնոլոգիական ընկերության» կողմից մշակված գիտամեթոդական կրթական մոտեցումները բարձր տեխնոլոգիաների ասպարեզում կրթական ծրագրեր իրականացնելու համար:

1.3 Ռադիոէլեկտրոնիկայի եւ վեբ ծրագրավորման կրթական ծրագրերի կազմակերպման եւ իրականացման համար Կենտրոնը տրամադրում է տարածք, սարքավորումներ եւ միջոցներ, իսկ Ընկերությունը՝ գիտատեխնիկական խորհրդատվություն եւ գիտամեթոդաբանական նորարարության մոտեցումներ: Կենտրոնի կողմից տրամադրված միջավայրն ու

մեխանիզմները համատեղվում են Ընկերության կողմից հաստատագրված եւ ֆորմալ հսկողության տակ իրականացվող կրթական պահանջներով:

1.4 Ստեղծվելիք կառույցը գործարկելու համար կողմերը տրամադրում են միջոցներ.

1.4.1 Կենտրոնը՝ գույք, սարքավորումներ:
1.4.2 Ընկերությունը՝ գիտական փորձագիտություն եւ խորհրդատվություն:

2. Կողմերը համաձայնվում են նաեւ, որ կենտրոնում դասավանդող մանկավարժների վարձատրությունը կկատարվի Կենտրոնի կողմից նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Մանկավարժների ընտրությունը, կրթական ծրագրերի հաստատումն իրականացնում են համատեղ: Մանկավարժները մեթոդիկայի համար պատասխանատու են նաև Ընկերության ներկայացուցիչների առաջ:

3. Սույն հուշագիրը կարող է հիմք հանդիսանալ առանձին պայմանագրերի կնքման համար, որոնցում կճշտվեն կոնկրետ միջոցառումները, կամրագրվեն համատեղ իրականացման եւ ֆինանսական եղանակները եւ ժամկետները:

4. Սույն հուշագրի կնքման եւ կատարման հետ կապված կողմերի փոխհարաբերությունները բնութագրվում են միմիանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ, ինչպես եւ անձանց, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել սույն հուշագրի նպատակի իրականացումը:

5. Սույն հուշագիրը բաղկացած է 2 էջից, կազմված է հայերեն լեզվով եւ կնքվում է երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

6. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

7. Սույն հուշագրում փոփոխություններ եւ լրացումներ կարող են կատարվել բացառապես Կողմերի գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն հուշագրի անբաժանելի մասը:

«Ընտանիք» ՄՊՍԿ	ՊՈԱԿ	«ՇՏԸ» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 05504412		ՀՎՀՀ՝ 02557468
Ք. Գյումրի, Թեքչերի փող. 1ա		Ք. Երեւան, Լեոյի 7, բն.4
Քնարիկ Ահարոնյան		Ավետիք Եսայան
Կ.Տ.		Կ.Տ.
«15» Հոկտեմբեր 2008թ.		«15» Հոկտեմբեր 2008